ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
19.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/2 պայմանագրի

ք. Երևան «14» «03» 2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով **ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների <<ՓՈՒԼ-2>>-ով /բնակելի տներ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքներ/ նախատեսված թվով 13 բնակելի տների շինարարական աշխատանքների** իրականացման համար Կողմերի միջև 19.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 16.02.2023թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետը լրացնել նոր 1.2 ենթակետով՝

<<1.2 Սահմանել, որ 08.12.2022թ. կնքված N 3 համաձայնագրով նախատեսված մնացորդային աշխատանքներից չկատարված 204 080 470 (երկու հարյուր չորս միլիոն ութսուն հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամի աշխատանքների կատարման ժամկետը 15.12.2022 թվականն է:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Շորին-Ձոր/ թաղ.3
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 220263331146000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն՝

_____ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.